կան իրադարձությունների կարևոր կենտրոնի։ Այս շրջանը, որի բնակիչները արաբ հեղինակների վկայությամբ հիմնականում քրդեր էին, գտնվում էր Էրբիլի և Համադանի միջև[30]։ IX—X դդ. Շահրիզուրի քրդերն այնքան էին հզորացել, որ համարյա չէին ենթարկվում կենտրոնական իշխանությանը։ Աբու Դուլաֆը նշում է, որ Շահրիզուրում «ալ-Ջալալիյա», «ալ-Յաբսան», «ալ-Հիքմիյա», «աս-Սուվլիյա» քրդական ցեղերից ձմեռում էին 60 հազար ընտանիքներ, որոնք ունեին նաև «երկրագործական դաշտավայրեր»[31]։ Նույն Աբու Դուլաֆի վկայությամբ Շահրիզուրի գլխավոր քաղաքն էր Նիմ Ազրայը, որի բնակիչները չէին ենթարկվում խալիֆին[32]։

Համադանից Ջենջան տանող ճանապարհի վրա էր գտնվում Սուհրավարդ քաղաքը։ Իբն Հաուկալը գրում է, որ այս քաղաքը նման էր Շահրիզուրին և գտնվում էր հիմնականում քրդերի տիրապետության տակ։ Նրա բնակիչները խարիջիներ էին[33]։ Աշխարհագիրն այնուհետև ավելացնում է, որ Շահրիզուրից դեպի Ամիդ, Ատրպատական, Ջազիրա և Մոսուլ ձգվում են բարձրաբերձ լեռներ։ Այս տարածքներում բնակվում են «ալ-Հումայդիյա» (ալ-Համիդիյա), «ալ-Ավնյա (կամ ալ-Լավիյա), «ալ-Միհրանիյա» և քրդական այլ ցեղեր[34]։ Շահրիզուրի քրդական ռազմատենչ ցեղերից էր «ալ-Ջալալիյան», որը հաճախ հայտնվում էր Շահրիզուրի սահմաններից դուրս և քրդական աշ-Շամարդլիյա ցեղի հետ միասին IX դ. երկրորդ կեսին մասնակցեց Մոսուլի մարզի խարիջիների շարժմանը[35]։

Շահրիզուրում, ինչպես և ողջ Ջիբալում քրդական ցեղերի տեղաշարժերը բավական աշխույժ էին։ Դրանք հիմնականում կապված էին անասնապահական տնտեսության վարման հետ։

Կարմասինի, Շահրիզուրի, Դինավարի, Նեհավանդի և Ջիբալին հարակից Ատրպատականի առանձին շրջաններում X դ. մեջ հայտնի քրդական ցեղերից էին «ալ-Բարդինիյան» (ալ-Բարդիկան), «ալ- Այշանիյան», «աշ-Շադանջանը», «ալ-Կավհիյան» և այլն[36]։ X դ. առաջին կեսին վերը նշած վայրերում այս ցեղերի տիրապետությանը ենթարկվեցին առանձին շրջաններ[37]։ Իբն Հաուկալի վկայությամբ X դ. քրդերն իրենց ազդեցությունը տարածեցին նաև Կազվինի և Զենջանի միջև ընկած Աբհար քաղաքի ու նրա ենթակա շրջանների վրա[38]։

Այսպիսով, Ջիբալում քրդական ցեղերը մեծ թիվ էին կազմում և նրանց գործողությունների արդյունքը եղավ X դ. երկրորդ կեսից Հասանվայհների իշխանության (960-ական թթ.—1015 թթ.) հիմնադրումը[39]։

Արաբական արշավանքներից սկսած մինչև X դ. քրդերը հաճախ հիշատակվում են իրանական նաև այլ նահանգներում։ Այսպես, օրինակ, Խուզիս-

---

բոնով։ (Al-Istakhri, Viae Regnorum, –(BGA), ed. M. S. De Goeje, Lugduni Batavorum Apud E. J. Brill, 1870, p. 195, Ibn Haukal, *նշվ. աշխ., էջ 225)։*

30 ياقوت ' معجم ' ج ٣ ' ص ٣٧٥ - ٣٧٦ .

31 «Вторая записка Абу Дулафа», с. 18.

32 *Նույն տեղում։*

33 Ibn Haukal, *նշվ. աշխ., էջ 263։*

34 *Նույն տեղում, էջ 265։*

35 ابن الاثير ' الكامل ' ج ٦ ' ص ٣٥ - ٣٦ ' ابن خلدون ' كتاب العبر ' ج ٣ ' ص ٣٢٩ .

36 ابن الاثير ' الكامل ' ج ٧ ص ١٠١ ' ٣٠٧ - ٣٠٨ .

37 *Նույն տեղում։*

38 Ibn Haukal, *նշվ. աշխ., էջ 258։*

39 *Այդ մասին տե՛ս,* Cl. Cahen, Hasanwayh (The Encyclopaedia of Islam), v. III, London, 1966, pp. 258—259.